

## **Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն աշխատանքային այցի շրջանակում մարզի Գեղաշեն, Արամուս և Մայակովսկի համայնքներում էր**

**10.09.19**

Այսօր Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն աշխատանքային այցի շրջանակում մարզի Գեղաշեն, Արամուս և Մայակովսկի համայնքներում էր: Այս համայնքներից երկուսը (Գեղաշեն և Արամուս) համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված Կառավարության 2019թ-ի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կունենան նոր մանկապարտեզներ, իսկ Մայակովսկի համայնքի մանկապարտեզը վերանորոգվում է Առաջնահերթ լուծում պահանջող ծրագրով:

Մարզպետի առաջին կանգառը Գեղաշեն համայնքում էր, որտեղ սուբվենցիոն ծրագրի շրջանակում կառուցվելու է ամբողջովին նոր մանկապարտեզ:

Այստեղ արդեն վաղը մեկնարկելու են հողային աշխատանքները:

Ծրագրի արժեքն է 179.071.700 դր, որից համայնքի ներդրումը՝ 10%, պայմանագիրը կնքման փուլում է:

Մանկապարտեզը նախատեսված է շուրջ 140 երեխայի համար:

Հիշեցնենք, որ Գեղաշենում, սուբվենցիոն ծրագրի շրջանակում արդեն իսկ կառուցվել է խմելու ջրի 2 ջրագիծ՝ 3.890.000 և 12.499.980 դր արժողությամբ:

Մարզպետի հաջորդ կանգառը Արամուս համայնքում էր:

Այս համայնքն ունենալու է մոտ 1.750 ք/մ ընդհանուր մակերեսով մանկապարտեզ, որը նախատեսված է 6 խմբերի համար:

Արամուսում շուրջ 150 փոքրիկներ կհաճախեն ժամանակակից նախադպրոցական հաստատություն:

467մլն դր ընդհանուր ծրագրային արժեքով՝ ՀՀ կառավարությունն արդեն հաստատել է 200մլն դր արժեքով սուբվենցիոն հայտը:

Մանկապարտեզը կառուցվելու է դպրոցամերձ հատվածում, իսկ վաղը շինարարությունն իրականացնող ընկերության ընտրության մրցույթն է հայտարարվելու:

Մարզպետի վերջին կանգառը Մայակովսկի համայնքում էր:

Այստեղ արդեն Առաջնահերթ լուծում պահանջող ծրագրով վերանորոգվում է համայնքի մանկապարտեզը, որի շենքը երկար տարիներ կիսախարխուլ վիճակում էր:

Հիմնանորոգվում է մի ամբողջ մասնաշենք, իսկ ճաշարանային հատվածը համայնքի միջոցներով արդեն նույնիսկ ամսին պատրաստ կլինի շահագործման:

Պայմանագրի արժեքն է 26.790.000 դր, համայնքի ներդրումը՝ 3.550.000դր:

Կոտայքի մարզպետի այցերը տարբեր համայնքներ շարունակվում են: